www.mediaforedu.am
Տեղեկատվական-վերլուծական կայք
Երևան, Հայաստան

ՀՀ ԿԳՄՍ նախարար

Ժաննա Անդրեասյանին

Հարցում

Հարգելի տիկին նախարար,

ՀՀ ԱԺ նախընտրական քարոզարշավի մեկնարկից մեկ շաբաթ անց «Ականատես» դիտորդական առաքելությունը փաստեց, որ մայիսի 13-ին վարչապետի մասնակցությամբ իշխող Քաղաքացիական պայմանագիր կուսակցության նախընտրական քարոզարշավի շրջանակներում Ապարան համայնքում արձանագրվել են հանրակրթական ուսումնական հաստատություններում քաղաքական գործունեության արգելքի խախտման և քարոզչությանը անչափահասների ներգրավման դեպքեր, համայնքի և հարակից բնակավայրերի մի շարք դպրոցների տնօրեններն ու ուսուցիչները դասերի ժամանակ կազմակերպված մասնակցել են միջոցառմանը:

Ըստ «Ականատեսի», ուսուցիչների և տնօրինության անմիջական հրահանգով աշակերտները դուրս են բերվել դասապրոցեսից՝ վարչապետին դիմավորելու և քարոզչական միջոցառմանը մասնակցություն ապահովելու նպատակով: Երեխաներին բաժանվել են դրոշներ, ընդ որում, դպրոցականներին նախապես տրվել են պարտադրողական բնույթի ցուցումներ անգամ արտաքին տեսքի, հագուստի, ինչպես նաև սանրվածքի վերաբերյալ՝ հորդորելով լինել հյուսերով»:

Այս հայտարարությունից հետո, հարգելի տիկին նախարար, Դուք ՖԲ–ում գրեցիք, որ Արագածոտնի մարզում քարոզարշավին դպրոցների մասնակցության գրանցված դեպքերով նախարարությունը կանցկացնի առանձին քննություն՝ հանգամանքները պարզելու և օրենքով սահմանված հետևանքները կիրառելու համար, որևէ դեպք անպատիժ և անհետևանք չի մնալու:

Հաշվի առնելով վերոգրյալը, խնդրում եմ պատասխանել հետևյալ հարցերին.

1. Ի՞նչ է պարզվել նախարարության ձեռնարկած քննությամբ:

2. Ի՞նչ լրացուցիչ միջոցառումներ են ձեռնարկվել հանրակրթական ուսումնական հաստատություններում նման դեպքերի բացառման ուղղությամբ:

3. Նախարարությունը իրավապահ մարմիններից տեղեկություններ ստացե՞լ է, թե նախորդ նմանատիպ 3 ահազանգերի առնչությամբ ինչ արդյունքներ կան և որոնք են այդ արդյունքները:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով, քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, եթե չկա օրենքով սահմանված երկարաձգման հիմք: Խնդրում եմ հայցվող պատասխանները տրամադրել համարակալված, հստակ եւ վերջնական, ամբողջական պատասխանի պահանջներին համապատասխան:

Կանխավ շնորհակալություն:

Անուշ Մարտիրոսյան

mediaforedu.am տեղեկատվական – վերլուծական կայքի խմբագիր

25.05.2026 թ.